Արշակ Չոպանյան

Սկիրերգ առ լուսին

Ես փափկահյուս ամպն ըլլայի սպիտակ
Որ իր կաթնաթույր թափանցկության տակ
Կսքողե դեմքիդ փողփողումն հստակ:

Մին ըլլայի ես անթիվ աստղերեն,
Մեղունե՛ր, որ շուրջդ, ո՛վ վարդ լուսեղեն,
Կպտուտքին միշտ ու հյութ կքաղեն:

Ես լեռն ըլլայի ճակտով թխահեր,
Ուր կթառիս պա՛հ մը երկինքն ի վեր
Դեռ չբացած լայն անտես քու թևեր:

Ըլլայի՜ անտառն, որուն խավարչտին
Ոստերուն մեջեն հուշիկ կը սահին,
Կը կախվին ոսկի մազերըդ նրբին:

Ես ծովն ըլլայի, որուն վրա առատ
Թույլ թույլ կը փռես քու լույսն անարատ,
Արծաթ ու ոսկի, հուր ու մեղր ու կաթ:

Ա՜խ, գեթ այն շիրիմն ըլլայի ցրտին,
Ուր գըգվող շողերդ կուգան մեղմագին
Հոսել լույս թախիծն իրենց արցունքին: